ԼՈՌԻ ԲԵՐԴԻ № 2 ԴԱՄԲԱՐԱՆԸ

1969 թ. օգոստոսին ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դաշտային ջոկատը հետախուզական պեղումներ կատարեց Ստեփանավանի շրջանի Լոռի բերդ գյուղում։ Այստեղ, գյուղ տանող խճուղու երկու կողմերում, տարածված է հնադարյան մի դամբարանադաշտ, որը գրավում է հարավից Զորագետ և արևելքից Միսխանա գետերի առաջացրած խոր ձորերի միջև գտնվող սարահարթը։ Այստեղից երեք կիլոմետր հեռավորության վրա, Զորագետի և Միսխանայի միախառնման մասում, սուր, անառիկ հրվանդանի վրա կանգուն են միջնադարյան Լոռե բերդաքաղաքի ավերակները։ Բոլոր կողմերից լեռներով շրջապատված այս հովիտը մի գողտրիկ անկյուն է, որտեղ երկրագործության և անասնապահության զարգացման համար բավարար հնարավորություններ կան։

Միսխանա գետի ձախ ափին պարզորոշ կերպով կարելի է նկատել հին բնակավայրի հետքերը, քառանկյունի շինություններով, որը ըզբաղեցնում է գետի բարձրադիր ափը, մի քանի հեկտար տարածությամբ։ Դամբարանադաշտը և բնակատեղին, որոնք իրարից բաժանվում են խոր, սակայն որոշ մասերում դյուրանցանելի կիրճով, մասամբ ավերվել են, առաջինը՝ Լոռի Բերդ գյուղի հիմնադրման պատճառով, իսկ երկրորդը՝ խճուղու շինարարության և նոր վարելահողերի յուրացման հետևանքով։

Դամբարանադաշտում առաջին հայացքից կարելի է տարբերել երեք տիպի դամբարաններ. մի քանիսը ծածկված են խոշոր և մանր քարերի կույտով, կես մետրով բարձր են գետնի մակերևույթից։ Մի մասը քարերի շրջանաձև շարվածք ունեցող կրոմլեխներ են, իրենց չափերով շատ տարբեր՝ 14—15 մետր կամ 6—7 մետր տրամագծերով, կան նաև արտաքինից միայն 1—2 քարով արտահայտված դամբարաններ։

1968 թ., խճուղու մոտ, հողային աշխատանքների ժամանակ պատահարար բացված մի դամբարան պեղել է Լոռի Բերդը ուսումնասիրող հնագետ Իգիթ Ղարիբյանը. սակայն, ցավոք, այն կողոպտված է եղել ուշ միջնադարում։ Այս դամբարանը, որը համարեցինք № 1, իր ճարտարապետական կառուցվածքով և թաղակապ ծածկով դասական է, ինչպիսիք կարելի է տեսնել Լճաշենում և այլ հնավայրերում։ Այն ունի երկու կողմերից հետզհետե նեղացող քարե պատեր, որոնց վրա նստած են չորս հսկա սալաքարերը, ամփոփելով իրենց մեջ 6,70 մետր երկարության և 2,92 մետր լայնության դամբարանը, որը պատկանում է կրոմլեխների տիպին և ունի 14 մետր տրամագիծ (նկ. 1, չափագրությունները կատարել է ճարտարապետ Ս. Մաթևոսյանը)։

Պեղվեց վերոհիշյալ դամբարանից 40 մետրը հեռավորության վրա գտնվող գրեթե կլոր մի դամբանաբլուր՝ 7,5 մետր տրամագծով, ծածկված միջին մեծության քարերով և կես մետրով բարձր գետնի մակերևույթից։ Պեղման սկզբում պարզվեց, որ գոյություն ունեցած հինգ սալաքարերից միայն մեկն էր իր տեղում մընացել, մեկը դամբարանը դեռ դատարկ եղած ժամանակ ընկել էր մեջը, իսկ մյուսները տարվել և օգտագործվել էին որպես շինանյութ։ Սկզբում թվաց, թե Լոռի Բերդի № 2 դամբարանը նույնպես կողոպտված է, մանավանդ, երբ մոտ 70 սմ խորությունից հայտնաբերվեցին բրոնզե երկու բոժոժներ, ապա կոճակ՝ արծաթե երեսապատով, սակայն հետագա աշխատանքներն ապացուցեցին այլ բան։

Դամբարանի երկարությունն էր 5,8 մետր, լայնությունը՝ 2,35 մետր, խորությունը՝ 2,45 մետր, ձգվում էր հյուսիս-արևմուտքից հարավարևելք և իր ճարտարապետական կառուցվածքով զիջում էր № 1-ին։ Սա հիմնահողային էր հատակից մինչև կես մետր բարձրությունը, որից վերև երբեմն հիմնահողային պատին փոխարինում էր քարը։ Հարավային և արևելյան պատերն ամբողջովին հիմնահողային էին, իսկ հյուսիս-արևմտյան պատը մեկ հսկա քարից էր կազմված, որը հավանաբար վերջին ծածկի քարն էր՝ խախտված իր նախկին տեղից։ Ծածկի սալաքարերը պահելու նպատակով նրանց տակ, երկու ծայրերում, տեղավորված էին միջին մեծության քարեր (նկ. 2)։ Դամբարանում լցված հողը չափազանց կարծր էր ու խոնավ, որը դժվարացրեց պեղման աշխատանքները։ Իրերի մեծ մասը հայտնաբերվեց հյուսիս-արևմտյան կեսում, մյուս կեսում թաղված էին երկու ձիեր։ Երկու մետր խորության մեջ երևացին մեկ ձիու վերջավորությունները։ Միևնույն մակարդակի վրա էր դամբարանի նյութերի մեծ մասը՝ բրոնզե ապարանջաններ ու մանյակներ, երկաթե կեռ դանակներ, ոսկե և արծաթե զարդեր, քարե ուլունքներ, սափորներ, գավաթներ, քրեղաններ, ուրարտական սրվակ և այլ իրեր, որոնք հանդես են գալիս երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի հուշարձաններում։ Պեղման ընթացքում պարզվեց, որ այստեղ կատարվել է կրկնակի թաղում. հայտնաբերվեցին իրեր, որոնք բնորոշ են ավելի վաղ ժամանակաշրջանների, այն է՝ ուշ բրոնզի դարաշրջանի համար։ Սրանք տեղավորված էին մոտ կես մետր ավելի խոր, արևմտյան պատի տակ, նը-





ռանց վրա ընկած սալաքարը ճզմել էր խեցեղեն անոթները։ Վաղ շրջանի թաղման կմախքը չհայտնաբերվեց, իսկ իրերը հիմնականում հավաքված էին մի կողմ՝ արևմտյան պատի տակ։ Թաղմաթիվ ու բազմաձև բրոնզե բոժոժներն ու կոճակները, որոնք գոյատևում են XIV—VI դդ. մ. թ. ա., այստեղ երևում էին թե՛ վաղ, և թե՛ ուշ թվագրվող նյութերի հետ միասին խառը վիճակում, ուստի դրանք միացրել ենք ուշ շրջանի թաղման նյութերին։

Վաղ շրջանի իրերի մեջ առանձին խումբ են կազմում պաշտամունքային խեցեղեն անոթները, որոնք իրենց ոճով և կավի բաղադրությամբ համանման են։ Այդ բոլոր իրերն, ինչպես արդեն ասվեց, կոտրատվել էին ընկած սալաքարի տակ, ուստի հնարավոր չեղավ դամբարանում նրանց դիրքը որոշել, որը կարևոր էր թաղման ծեսի ուսումնասիրության առնչությամբ։ Դրանցից են Հայաստանի հնավայրերից քաջ հայտնի բարձր, սնամեջ «բուրանոթները», որոնք եղել են հինգը, բայց ամբողջովին վերականգնվեցին միայն երկուսը։ Այս իրերը պատրաստված են ձեռքով, ունեն հաստ պատեր, սև գույն։ Կենտրոնական մասում եռանկյունիների և ոլորանախշերի խազված գծերի մեջ լցված են փոսիկներ, որոնք ընդելուզված են կարմիր և սպիտակ շաղախով, զարդարուն մասերում նաև ներկված այդ գույներով։ «Բուրանոթներն» ունեն չափերի փոքր տարբերություններ, նեղ են կամ լայն (աղ. I, նկ. 1, 2)։ Սրանց մոտ գտնված խուփի բեկորը (աղ. I, նկ. 3) համընկավ «բուրանոթներից» մեկի բերանին։ Պետք է նշել, որ նման անոթների վրա դեռևս խուփ չէր հայտնաբերվել։ Այս պաշտամունքային իրերը, որոնք տվյալ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում տարածված հոգևոր որոշակի պատկերացումների և ծիսակատարությունների հետ են կապվում (մինչ այժմ հայտնաբերվել են միայն դամբարաններից), ամենուրեք զարդարուն են, հանդիպում են Լճաշենում, Երևանի արվարձաններում (Ս. Եսայանի պեղումներից), ինչպես նաև Մեծամորում[1]։ Հաջորդը երկու լայնափոր կճուճներն են, ուսերի վրա խազված եռանկյունիների գոտիով, որտեղ կան մեզ ծանոթ անհավասար փոսիկները, կարմիր և սպիտակ ընդելուզված մասսայով։ Սրանց հիմքում մեկական տափակ, սեղանաձև կանթ

[1] Է. Խանզադյանի պեղումներ (նյութը գրտնվում է Մեծամորի թանգարանում)։

կա (աղ. I, նկ. 4, 5)։ Հայտնաբերվեց նաև երկու կողմերից ներճկված, ընկույզի կեսի ձևով քրեղան, բարակ պատերով, որը շուրթի մասում կրում է նույն զարդանախշը (աղ. I, նկ. 6)։ Այսպիսի վեց քրեղաններ հայտնաբերված են Լճաշենի № 5 դամբանաբլրից, օձերի վերադիր քանդակներով զարդարված «բրուրանոթների» և «զոհարանի» հետ միասին։ Վերոհիշյալ ոճով խեցեղենի թվում պետք է նշել նաև կանթեղը (թերի), հինգ ուղղահայաց, ցցուն խողովակներով, որոնց մեջ պահպանվել են մրի հետքերը (աղ. I, նկ. 7)։ Նման կանթեղ հայտնաբերվել է դարձյալ Լճաշենից, իսկ կարմիր գույնի գնդաձև կանթեղ երկու խողովակներով՝ Գեղանուշից (Ղափան)։

Այս եռագույն խեցեղենի հետ միասին հայտնաբերվեցին նաև փայլով արված ցանցկեն զարդագոտի ունեցող քրեղանների բեկորներ, ինչպես նաև մեկ քրեղանի բեկոր, ընկույզի կեսի ձևով, վրան փայլուն, եռանկյունաձև զարդերով (աղ. V, նկ. 1—4)։ Դամբարանի կենտրոնական մասում, պատի տակ ընկած սալաքարի ճիշտ կողքին, գտնվեց բրոնզե կաթսայի մի մասը, լայնացող ուսերով, որի նմանը հայտնաբերված է նաև Լճաշենից։

Ուշ բրոնզեդարյան նյութերի մեջ առանձին հետաքրքրության են արժանի երեք բրոնզե թռչունների արձանները, որոնցից երկուսը տեղավորված էին դամբարանի հյուսիսային և արևմտյան անկյուններում, ուղղակի պատի տակ,



երրորդը՝ կաթսայի կողքին (աղ. VI, նկ. 1—3)։ Սրանք, փոքր տարբերություններով հանդերձ, շատ նման են միմյանց, թևերի տեղում և կրծքին ունեն եռանկյունաձև կտրվածքներ, ընդելուզված աղյուսագույն շաղախով, օժտված են միաձույլ սեպով փայտի մեջ ամրանալու համար։ Թռչուններն իրենց կեցվածքով, արտահայտությամբ խիստ նման են Լճաշենի արձանիկներին (II հազարամյակի վերջ), որոնք, սակայն, ունեն պատվանդաններ և կարող են պտտվել իրենց առանցքի շուրջը[2]։ Բրոնզեդարյան դամբարանի նյութերից պետք է համարել նաև երկու ոսկե ուլունքները, որոնք իրենց ձևով և ոճով կապվում են մի կողմից Լճաշենի, մյուս կողմից՝ Թրիալեթիի դամբանաբլուրներից հայտնաբերված ոսկե ուլունքների ու զարդերի հետ։

Կարելի է ենթադրել, որ այս դամբարանը եղել է մ. թ. ա. XIV—XIII դարերի այն հարուստ հուշարձաններից, որպիսիք տեսնում ենք Լճաշենում, մի քիչ ավելի վաղ՝ Թրիալեթիում, Կիրովականում և այլ վայրերում։ Մ. թ. ա. VII—VI դարերում կատարված երկրորդ թաղման ժամանակ իրերի մեծ մասը կողոպտվել է, մանավանդ մետաղը, խեցեղենի մի մասը հավաքվել է մի կողմ, և դամբարանն օգտագործվել ամբողջությամբ։

Վերջին թաղումը նույնպես հարուստ էր։ Ննջեցյալը տեղավորված էր դամբարանի կենտրոնում, լայնությամբ, դեմքով դեպի արևելք։



Աղ. V



Աղ. VI

կմախքը խիստ քայքայված էր։ Նրա հետ թաղված բազմաթիվ և բազմազան իրերը վկայում են, որ նա եղել է տոհմիկ մարդ, շատ հավանական է՝ կրոնական առաջնորդ կամ քուրմ։

Հայտնաբերված մետաղե առարկաների մեջ գերիշխում են բրոնզե իրերը, որոնք հիմնականում զարդեր են։ Արևելյան պատի տակ գտնվեցին տարբեր մեծության երեք մանյակներ՝ մեկը մյուսի մեջ դրված։ Հնարավոր է, որ դրանք ճիշտ այդ ձևով էլ կրել են վզի վրա։ Սրանք պատրաստված են բառանիստ ձողից և կենտրոնական մասում պարանաձև ոլորված են (աղ. III, նկ. 1—3)։ Նման մանյակներ հայտնաբերվել են Թաղայշվիլու կողմից Որնակի № 1 և № 5 դամբարաններում (Էրմիտաժ, № 16718)[3], Գյուլագարակում (ՊՊԹ, № 1299), Ստեփանավանի շրջանում (ՊՊԹ, № 1315), Խրտանոցում, Գոլովինոյում, Ջրառատում (մ. թ. ա. VII—VI դդ.), Հյուսիսային Կովկասում[4] և այլն։

---

[2] А. О. Мнацаканян. Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г., СА, 1957, № 2, էջ 152, նկ. 13։ Նույնի՝ Лчашенские курганы, КСИИМК, вып. 85, 1961, նկ. 25—7, իսկ «բուրանոթները»՝ նկ. 26, 3։

[3] «Дневник Е. С. Такайшвили». Архив ИА СССР, д. № 17/1894 г.

[4] О. А. Артамонова-Полтав-

Դամբարանն աչքի է ընկնում բրոնզե բոժոժների բազմությամբ, որոնք հիմնականում հայտնաբերվել են նրա հյուսիս-արևմտյան մասում այլ զարդերի հետ միասին։ 30 բրոնզե բոժոժները տարբեր մեծության են, ունեն ուղղահայաց, սրածայր կտրվածքներ։ Մի քանիսն ունեն գնդաձև լեզվակներ, մյուսների ներսի մասը պատված է աղյուսագույն շաղախով (աղ. VI, նկ. 4—11)։ Վերոհիշյալ բոժոժների բոլոր տեսակները կարելի է տեսնել Հայաստանի բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի բազմաթիվ հնավայրերում։

Բրոնզե ապարանջանների թիվը հասնում է քսանութի, որոնց մի մասը հայտնաբերվեց մանյակների հետ, մյուս մասը՝ ննջեցյալի կողքին և կրծքի վրա։ Սրանք դասավորված էին երեքական կամ չորսական, միմյանց վրա դրված, շատ հաճախ զարդարունը և անզարդը իրար հետ, որոնց մեջ լցված էին մեծ քանակությամբ քարե ուլունքներ։ Կրծքի վրա գտնվող ապարանջաններից մի քանիսի վրա, օքսիդի հաստ շերտի մեջ, արտատպվել էր ննջեցյալի հագուստի գործվածքը։ Ապարանջանների մի մասը բոլորովին պարզ, անզարդ, ձուլածո օղակներ են (16 հատ), մյուսները՝ ատամնաձև փորագրված (8 հատ), կան նաև երկու ծայրերն իրար վրա բարձրացող ապարանջաններ։ Ապարանջաններից երեքը փոքր չափի են, օձագլուխ, շատ թույլ արտահայտված խազային դծերով։ Գեղեցիկ է գծային և կետային զարդերով օձագլուխ ապարանջանը (աղ. III, նկ. 4—10)։ Բրոնզե կլոր-օղակաձև և ատամնավոր զարդերով ապարանջաններ հայտնաբերվել են երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի բազմաթիվ դամբարաններում, իսկ ծայրերն իրար վրա բարձրացող ապարանջանները թվագրվում են IX—IV դարերով մ. թ. ա.։ Այսպիսի անզարդ, ատամնաձև զարդերով և օձագլուխ ապարանջաններ և ոլորուն մանյակներ հայտնաբերվել են 1929 թ. Խրտանոցի մ. թ. ա. VII—VI դդ. դամբարաններից, 1950 թ. Գոլովինոյի պեղումներից[5], Որնակի N 5 դամբարանից (էրմիտաժ, N 16728) և Մառի պեղումներից (էրմիտաժ N 16969), Սևանից և բազմաթիվ այլ վայրերից։ Սրանք մեծ մասամբ հանդես են գալիս երկաթե կեռ դանակների, նիզակի ծայրերի, ինչպես նաև սկյութական նետասլաքների հետ (VIII—VI դդ. մ. թ. ա.)։ Բավական առատ են նաև բրոնզե կոճակները (20 հատ), որոնցից ութը պատված է արծաթե բարակ թիթեղով։ Համարյա միանման, ավելի կամ պակաս ուռուցիկությամբ, երկարավուն կամրջակով կոճակները հայտնաբերվեցին դամբարանի տարբեր կողմերից։ Նման կոճակներ հանդիպում են բազմաթիվ հնավայրերում. կլոր, մեծ և փոքր կոճակներ կարելի է տեսնել ասորեստանյան որմնանկարներում պատկերված ձիերի գլխի հարդարանքի վրա, իրար մոտ շարված (VIII դար մ. թ. ա.)։ Գտնված չորս մանրիկ կլոր կոճակներից (11 մմ տրամագծով) հայտնաբերվել են նաև Խրտանոցում (1929 թ.) և Գոլովինոյի N 6 դամբարանում։ Չորս այլ փոքրիկ կոճակները կամրջակի փոխարեն երկու կողմերից ատամներ ունեն, ամենայն հավանականությամբ փայտի վրա ամրանալու համար։ Այստեղ անհրաժեշտ է հիշատակել նաև բրոնզե էլիպսաձև շրջանակը, որի մեջ հագցրած փայտե տախտակի վրա, ուղիղ և խիտ շարքերով ամրացված են 4 մմ տրամագիծ ունեցող բրոնզե կիսագնդաձև գամերը, որոնք մտնում են փայտի մեջ շնորհիվ չորս սրածայր ատամիկների։ Այս իրը, իր բրոնզե շրջանակով և փայտի վրա ամրացված բրոնզե գնդիկներով հիշեցնում է Գոլովինոյի լանջապանակի մի մասը (II հազարամյակի վերջ—I հազարամյակի սկիզբ), միայն այն տարբերությամբ, որ այնտեղ շրջանակը կլոր է, իսկ այստեղ՝ էլիպսաձև, բրոնզե գնդիկներն այստեղ շատ ավելի մանր են ու խիտ շարքերով։ Այս առարկայից գտնվեց երկու հատ, որից մեկն ամբողջովին քայքայված էր։ Ուշադրության արժանի է գավազանի գլուխը՝ եռանկյունաձև կրտրվածքներով զարդարուն։ Բրոնզը Լոռի Բերդի տեղաբնիկների կողմից օգտագործվել է նաև մանրիկ զարդեր պատրաստելու համար, ինչպես, օրինակ, երկկոնաձև ու տակառաձև ուլունքներ (10 հատ), աստղանման զարդեր (18 հատ), որոնք հանդիպում են Մառի պեղումների նյութերում՝ Որնակից, Մորգանի պեղումների նյութերում՝ Շեյթան Դազից[7], Մարալ-Դերեսիի N 2 դամբարանից[8], Ռուսական Գալիշից[9] և այլն։ Կային նաև բրոնզե բարակ թիթեղից պատրաստված տարբեր երկարության երեք անզարդ խո-

---

цева. Культура Северо-восточного Кавказа в скифский период. СА, 1950, XIV, էջ 56, նկ. 95։

[5] А. А. Мартиросян. Раскопки в Головино, Ереван, 1954, աղ. V, VII, նկ. 7, աղ. XVI, նկ. 2—4, 9—13։

[6] «Памятники мирового искусства. Искусство Древнего Востока», М., 1968, նկ. 241։

[7] J. de Morgan. Mission scientifique au Caucase, Paris, 1889, էջ 49, 9—8a։

[8] Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети. I. Тб., 1941, աղ. XXIV։

[9] Cl. Schaaffer. Stratigraphie Comparée et chronologie de l'Asie Occidental. London, 1948, նկ. 233—31, 236—13։

ղովակներ, որոնք շատ տարածված են Անդրկովկասի երկաթի լայն տարածման շրջանի դամբարաններում։ Սրանք մեծ մասամբ զարդարված են լինում խորադիր երկրաչափական գծանախշերով։ Հայտնաբերվեցին ոռմրաձև ուլունքներ (13 հատ)՝ բրոնզե բարակ թիթեղից, մեջը լցված շաղախով և մեկ զարդարուն բրոնզե ոնելի։ Հայաստանի մ. թ. ա. VIII—VI դդ. դամբարաններում հաճախ են հանդիպում այսպիսի զարդարուն և անզարդ ոնելիներ, որոնք հավանաբար օգտագործվել են կոսմետիկական նպատակների համար։ Կար նաև շղթա, մեդալիոնանման զարդ, շրջանաձև զարդ, եռանկյունաձև կտրվածքներով կախիկի բեկոր, որոնցից կարելի է տեսնել Շամշադինի շրջանում, Խրտանոցում և մ. թ. ա. VII—VI դդ. պատկանող այլ հուշարձաններում։ Գտնվեցին խոշոր գլուխներով գամեր՝ լցված աղյուսագույն շաղախով, հավանաբար ուռուցիկությունը պահպանելու համար, որոնցից հայտնաբերվել են Սամթավրոյի № 174 հիմնահողային դամբարանից[10]։ Քառակող բարակ գամերը ամրացված էին բրոնզե բարակ թիթեղների վրա։ Գեղեցիկ է ճարմանդը, որի ոլորուն շրջանակի մեջ հագցրած օրսիդիանի վրա բրոնզե պարույրներ են փակցված։ Գտնվեցին մեծ և փոքր 10 աղեղնաձև ֆիբուլաներ, որպիսիք հայտնաբերվել են մ. թ. ա. VIII—VI դդ. հուշարձաններում։

Երկաթե իրերը շատ ավելի սակավաթիվ են, քան բրոնզե իրերը, սակայն դրանք չափազանց բնորոշ ու կարևոր են դամբարանի ժամանակաշրջանը պարզաբանելու հարցում։ Երկաթե չորս դանակներից երեքը պահպանել են փայտե բռնակի մնացորդներն ու գամերը, երկուսի ծայրերն ավարտվում են անցքով։ Դանակներն ունեն միակողմանի աշխատող սուր ծայր։ Համանման երկաթե դանակներ, ինչպես նաև վերը նշված լանջապանակի մի մասը հայտնաբերվել են Գոլովինոյից[11], Խրտանոցի 1929, 1950 և 1961 թթ. պեղումներից (VII—VI դդ. մ. թ. ա.), Որնակի № № 2, 5, 16 դամբարաններից[12], Շեյթան Դաղից[13], Բեշտաշենի ամրոցից[14], Շամշադինի շրջանի Բերդ գյուղից, Արգիշտիխինիլիի № 3 բնակարանից և այլն։ Երկաթե իրերից է ձիասանձը (քայքայված), որն իր մահիկաձև երախակալով հիշեցնում է ասբեստանյան բրոնզե սանձերը, պատկերված բարձրաքանդակների վրա[15]։ Ձիերի կմախքի շրջանում գտնվեցին երկաթե այլ իրեր, որոնցից կարելի է տեսնել նաև Սամթավրոյի № 121 հիմնահողային դամբարանում (VIII—VII դդ. մ. թ. ա.)[16]։ Դամբարանում կային նաև ոսկե զարդեր՝ դիադեմա, ուլունքներ, կոճականման զարդեր, արծաթե ապարանջաններ, մատանիներ[17]։

Չափազանց մեծ թիվ են կազմում դամբարանում հայտնաբերված ուլունքները, մանավանդ քարե ուլունքները, որոնք կշռում են մոտ մեկուկես կիլոգրամ։ Ագաթե հոյակապ ուլունքները (52 հատ) մեծ մասամբ երկարավուն են, ունեն 1,7 սմ-ից մինչև 4 սմ երկարություն։ Գեղեցիկ են նաև հասպիսե բաժանարար ուլունքները (17 հատ), որոնք ունեն 5—7 անցք։ Կան նաև նշաձև ուլունքներ հասպիսից՝ կարմիր և դեղին։ Ագաթե և հասպիսե երկարավուն ու նշաձև ուլունքները հաճախ են հանդիպում Հայաստանի հուշարձաններում, որոնք ի հայտ են գալիս ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի նյութերում, հարատևելով մինչև երկաթի լայն տարածման ժամանակաշրջանը։ Բազմազան են և բազմաթիվ սարդիոնե ուլունքները, որոնց մեջ կարելի է տեսնել գնդաձև, արցունքաձև, բազմանիստ, տերևաձև, տափակ և մանրիկ փշանմանները։ Վերջիններս մինչև այժմ չեն հայտնաբերվել մեզ ծանոթ հուշարձաններից։ Քարե ուլունքների շարքում պետք է նշել մանավանդ սաթե ուլունքները, որոնք դարեր շարունակ մընալով խոնավ հողի մեջ, դարձել են շատ փխրուն և կորցրել արտաքին փայլը։ Սրանք մուգ կարմիր են, մի քանիսի վրա երևում են բնական երակները, ձևերով ու չափերով համարյա մեկը մյուսին նման չեն, սակայն մեծ մասամբ երկրաչափական ձևեր ունեն։ Կան նաև երկու խոշոր և մեկ փոքր բաժանարար ուլունքներ՝ խաչաձևվող անցքերով։ Որքան մեզ հայտնի է, Հայաստանի հուշարձաններից սաթ գրեթե չի հայտնաբերվում տեղական հումքի բացակայության պատճառով։ Մեկ սաթե ուլունք՝ ձևով շատ նման այս ուլունքներին, գտնվել է Կարմիր-

[10] Р. М. Абрамишвили, К вопросу об освоении железа на территории Восточной Грузии. «Вести. гос. муз. Грузии», 1961. XXII—В, էջ 377, աղ. XIII—1, XIV—1։

[11] А. О. Мнацаканян, О раскопках могильников у села Головино. КСИИМК. 1952. вып. XLVI. նկ. 17, 2 և 18, էջ 67, նկ. 14, 4։

[12] «Дневник Е. С. Такайшвили».

[13] J. de Morgan, նշվ. աշխ., էջ 132, նկ. 121—4։

[14] Б. А. Куфтин. նշվ. աշխ., աղ. XVI։

[15] «Памятники мирового искусства», 1968, նկ. 258б։

[16] Р. М. Абрамишвили, նշվ. աշխ., աղ. XIV—2։

[17] Ոսկե և արծաթե զարդերի մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Հ. Դեվեջյան, Լոռի Բերդի № 2 դամբարանի ոսկե և արծաթե զարդերը, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 271—275։

Բլուրի 1940 թ. պեղումներից[18], մի այլ նույնպիսի ուլունք գտել է Ռեսլերը Կարկաչայի ձախ ափի քարարկղներից մեկում[19]։ Այդպիսիք կան նաև Սամթավրոյի դամբարաններում (մ. թ. ա. I հազ. կես)։ Ինչպես հայտնի է, սաթը հանդիսանում է երրորդական ժամանակաշրջանի փշատերև ծառերի խեժը, որը կարող էր գոյություն ունենալ նաև Հայաստանում։ № 2 դամբարանում հայտնաբերված սաթի մեծ քանակը (նկատի ունենք նաև պեղման միջոցին ոչնչացածները), ինչպես նաև նրանից ոչ հեռու գտնվող, նույն ժամանակին պատկանող № 4 դամբարանի ավելի լավ պահպանված և ավելի խոշոր սաթե ուլունքների գոյությունը, թույլ են տալիս կատարելու այս ենթադրությունը։ Այլապես մնում է կարծել, որ սաթե առարկաները ներթափանցել են Հայաստան Հյուսիսային Եվրոպայի երկրներից, հավանաբար Արևելյան Միջերկրածովյան երկրների միջոցով, քանի որ սաթի փոխանակությունը սկիզբ էր առել դեռևս II հազարամյակից, կապված բրոնզի արտադրության հետ[20]։

Հայտնաբերվեցին նաև ոսկրանման, սպիտակ շաղախից պատրաստված դոմինոյաձև կոչվող ուլունքներ, բաց գույնի խմորից՝ տանձաձև ուլունքներ բրոնզե առանցքով, ապակե ուլունքներ կանաչ, կապույտ, դեղին գույների, գնդաձև և երկարավուն։ Կան նաև տարբեր գույների շաղախե գծազարդված ուլունքներ և զարդեր՝ գնդաձև, կոնաձև և գլանաձև։ Հայտնաբերվեցին նաև իլիկի գլխի ձևի, մեջտեղը անցքով զարդարուն իրեր, պատրաստված դոմինոյաձև ուլունքների խմորից։ Դամբարանում ըսպիտակ և երկնագույն խմորից մանրիկ ուլունքների թիվը հասնում էր հազարների, որոնք հանդես էին գալիս կույտերով, երբեմն միագույն, երբեմն խառը գույներով։ Գտնվեցին նաև «գիշեր» կոչվող ածխային ծագում ունեցող քարից պատրաստված խոշոր, գնդաձև և երկարավուն ուլունքներ՝ փայլուն և ողորկ մակերեսով։

Դամբարանում հայտնաբերված 45 կտոր խեցեղեն անոթների մեջ իր ուրույն տեղն ունի պաշտամունքային նշանակություն ունեցող խոշոր փորով սափորը՝ կենդանակերպ քանդակներով, որոնք շան և ինչ-որ սողունի են նման։ Սափորը շուրթի մասում նեղանում է ներսից, առաջացնելով անցք, որից ցած սնամեջ ելուստ ունի հեղուկն այնտեղից թափելու համար (աղ. II, նկ. 1)։ Կենդանիների քանդակները հիշեցնում են Թաղայշվիլու կողմից Որնակի № 35 դամբարանում հայտնաբերված կճուճի կանթերը, ինչպես նաև Թբիլիսիից հայտնաբերված ուշ բրոնզեդարյան խեցեղենի կենդանակերպ կանթերը[21]։ Կան նաև մեծ և փոքր սև, անզարդ քրեղաններ, կճուճներ, որոնց մեծ մասը խոհանոցային իրեր են (աղ. V, նկ. 5—8, աղ. II, նկ. 2—7)։

Հայտնաբերված հինգ գավաթներից մի մասը անկանթ է, մյուսները՝ կանթով. աչքի են ընկնում երկկոնաձև գավաթները, որոնք ունեն խուլ կանթեր ուղղահայաց փոքր անցքերով (աղ. IV, նկ. 1—5)։ Նման երկկոնաձև գավաթներ հայտնաբերվել են Մուսիերիից[22], Մակարաշենի № 2 դամբարանից[23], Ջրառատից, վերևում հիշատակված մանյակների հետ միասին[24], Կիրովաբադից[25], Արինբերդից (սա ունի կարմիր անգոբ)։ Հայտնաբերված են երկու սև թասեր՝ մեկը լավ հղկված է, ցայտուն արտահայտված ձևերով, նման ուրարտական թասերին (աղ. IV, նկ. 6), մյուսը՝ փոքրիկ է, անփայլ, շերեփանման, շուրթից դուրս եկող թռչնաձև ելուստով (աղ. IV, նկ. 7)։ Այս թասիկի կողքին կար մի ուրարտական սրվակ՝ կարմիր կավից բաց գույնի անգոբով (աղ. IV. նկ. 8)։ Նույնպիսի սրվակներ հայտնաբերվել են Կարմիր-Բլուրից, Արգիշտիխինիլիից, Արինբերդից (VII—VI դդ. մ. թ. ա.)։ Այս իրը շատ կարևոր է դամբարանի ժամանակաշրջանի և փոխանակային կապերի բացահայտման տեսակետից։ Խեցեղեն իրերի մեջ ուրույն գեղեցկություն ունի կուժանման սրվակը, բարակ պատերով, նուրբ, անփայլ, սև գույնի, 8,5 սմ բարձրությամբ, ասեղնազարդ (աղ. IV, նկ. 9)։ Այսպիսի փոքրիկ կուժիկներ, սակայն անզարդ, հայտնաբերվել են Շամշադինի շրջանի Ազատավան (Ղրղի) գյուղի մ. թ. ա. VI—V դդ. դամբարանում և Աստղիբլուրի ա-

---

[18] Б. Б. Пиотровский, Кармир-Блур, III, Ереван, 1955, էջ 52, նկ. 39—9։

[19] Отчеты археологической комиссии за 1897 г., էջ 153։

[20] БСЭ, 49, II հրատարակություն, էջ 571։

[21] Д. Коридзе, Позднебронзовые археологические памятники из Тбилиси, «Вестн. гос. муз. Грузии», XVIII, Б. Тбилиси, 1954, աղ. III, նկ. 4, 6։

[22] J. de Morgan, Նշվ. աշխ., էջ 157—3, 158։

[23] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 205, նկ. 6։ Վերևում հիշատակված երկաթե դանակները տե՛ս նույն տեղում, էջ 270, նկ. 105 3—5 և Раскопки Аргиштихинили, СА, 1967, № 4, էջ 232, № 6։

[24] А. Мнацаканян, Г. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1961, № 8, աղ. 2, 3։

[25] Я. И. Гуммель, Археологические очерки, Баку, 1940, էջ 140. նկ. 1. № 5։

առաջին հազարամյակի կեսի դամբարաններում[26]։

Բնորոշ են մեկկանթանի երեք սափորները, որոնցից մեկն ունի խազային երկրաչափական նախշեր, իսկ մյուս երկուսը՝ սեղմումով կատարված ճառագայթաձև և օձանման զարդեր։ Վերջին երկու սափորների զարդանախշերը ուշ բրոնզի ժամանակաշրջանի նյութերում սովորաբար փայլով են արված լինում։ Կանթի վրա փոքրիկ ցցվածք կամ խոր աստիճանաձև զարդեր ունեցող սափորները բնորոշ են մ. թ. ա. VIII—VI դդ. հուշարձաններին (աղ. II, նկ. 8—10)։

Այսպիսով, Լոռի Բերդի № 2 դամբարանի վերին շերտը երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի մի հարուստ հուշարձան է, որտեղ մինչ այժմ բազմաթիվ հուշարձաններից հանդես եկող հնագիտական իրերի հետ միասին երևան են գալիս բոլորովին նոր նյութեր, որոնք կրում են իրենց ժամանակաշրջանի կնիքը։ Այստեղ հայտնաբերված կենցաղային իրերի, երկաթե կեռ դանակների, ասորեստանյան տիպի երկաթե սանձի, ուրարտական սրվակի, սափորների, գավաթների և այլ իրերի հետ միասին, ձիերի կմախքների հայտնաբերումը նույնպես հատկանշական է վերոհիշյալ ժամանակաշրջանի համար։

№ 2 դամբարանը Հայաստանում մինչև այժմ հայտնի մ. թ. ա. VII—VI դդ. դամբարանների մեջ ամենահարուստն է իր նյութերի բազմազանությամբ ու քանակով, ոսկե և արծաթե բարձրարվեստ զարդերի գոյությամբ։

Արմանիսի երկրաբանական արշավախմբի պետ Ս. Գոգինյանի տեղեկությունների համաձայն, ինչպես ոսկե և արծաթե, այնպես էլ բրոնզե իրերը կարող էին պատրաստված լինել մոտիկ հանքավայրերի հումքից։ Նրա հավաստիացմամբ, հնում շահագործված լինելու հետքեր են պահել Ալվարդի պղնձի հանքավայրում՝ Բելայա Ցերկով վայրի հանքավայրը, ինչպես նաև Ջիրուխլուի պղնձի հանքավայրը և Պղնձասարը (Պրիվոլնոյե գյուղից 2 կմ դեպի հյուսիս-արևելք), որոնք բնորոշ են հնագույն մետաղաձուլական խարամների առկայությամբ։

Ձիերի կմախքների ուսումնասիրությունը պարզեց, որ նրանք ընտանի են, երկսեռ, պատկանում են հարավային ցեղին և հեծվող տիպին (Equus caballus)։ Սրանք շատ խոշոր ձիեր են, նման Լճաշենի դամբարանների ուշ բրոնզեդարյան ձիերին։ Ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն հնագիտական, այլև կենդանաբանական առումով, քանի որ մինչև այժմ Հայաստանում երկաթի ժամանակաշրջանին պատկանող ձիու ոչ մի ամբողջական կմախք չէր ուսումնասիրված[27]։

Դիտելով այս դամբարաններից հայտնաբերված նյութերը, որոնք հարուստ են զարդերով և պաշտամունքային իրերով, սակայն աղքատ՝ զենքերով ու գործիքներով, կարելի է ենթադրել, որ այս դամբարանադաշտում դարեր շարունակ թաղվել են մարդիկ, որոնք պատկանել են քրմական դասին և ավագանուն։

Ստեփանավանի շրջանի Լոռի Բերդ գյուղի դամբարանադաշտը, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց շնորհիվ մ. թ. ա. XIV—XIII և VII—VI դդ. պատկանող № 2 դամբարանի, լայն հնարավորություններ է տալիս նոր խոսք ասելու Հայաստանի հյուսիսային՝ քիչ ուսումնասիրված շրջանների հնադարյան մշակույթի լուսաբանման տեսակետից, եթե ուսումնասիրվի ամբողջովին՝ իր բնակավայրով հանդերձ։

---

26 С. А. Есаян, Погребения VI—V вв. до н. э. в горах Шамшадина, СА, 1965, № 3, *նկ. 2, 15—18։ Նույնի՝* Астхиблурский могильник, *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1968, № 6, էջ 91, տախտ. V, նկ. 6։ Վերևում նշված երկաթե դանակները՝ նույնի.* Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района, *«Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, աղ. II, նկ. 1—3։*

27 *Ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունը կատարել է պալեոկենդանաբան Ս. Մեժլումյանը։*

Ս. ԴԵՎԵՋՅԱՆ

О ДВУХ ФИГУРАХ НА СКЕВРСКОМ РЕЛИКВАРИИ 1293 ГОДА

Итоги изучения Скеврского реликвария подведены в обстоятельном исследовании С. Тер-Нерсесян, опубликованном в 1961 г.[1] Проделав тщательный анализ названного памятника, С. Тер-Нерсесян сопоставила его с рядом сохранившихся памятников армяно-киликийской торевтики XIII—XIV вв. Через пять лет после выхода указанного исследования А. Я. Каковкин, до того изучавший иконографию отдельных фигур Скеврского реликвария[2], напечатал статью, ко-

---

1 См. S. Der Nersessian, La reliquaire de Skevra et l'orfévrerie cilicienne aux XIIIe et XIVe siècles, „Revue des études arméniennes", I, N. S. Paris, 1964, стр. 121—143, fig. 1—9.

2 См. А. Я. Каковкин, Об одном